

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 22-06-2022 թ. որոշմամբ
 «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԼՈՌԻ ՏԱՇԻՐ ԶԱՀՈՒԿՅԱՆ 10	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01009	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2008-08-27	
1.5 ՀՎՀՀ-ն	07203481	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)98939770	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը	beglaryan.ash@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը		
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների իրականացման համար	1,158,738,512
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնված ապրանքներ(օգնություն)	55,518,794	
Ֆինանսական օգնություն ֆիզ անձի(կարիքավոր, հաշմանդամ, բուժման նպատակներով)	14,251,395	
Ֆինանսական օգնություն Իրավ անձիք	44,653,360	
Ֆինանսական օգնություն Ուսման վարձ և կրթաթոշակ	1,620,000	
Ֆինանսական օգնություն Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ	723,789,000	
Ֆինանսական օգնություն Իջևանի Ամայա Կարապետյանի անվան նախակրթական ՀՈԱԿ	232,560	
Ֆինանսական օգնություն Տաշիրի համայնքապետարան	81,706,577	
Ֆինանսական օգնություն ԼՂՀ	147,855,000	
Ֆինանսական օգնություն բիզնես ֆորում կազմակերպելու համար	52,983,900	
Ֆինանսական օգնություն Փարաջանովի տուն թանգարան	1,737,521	
Իջևանի համայնքապետարանին ամանօրյա փաթեթներ	5,685,000	
Ֆինանսական օգնություն Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ(պետական հիմնարկ)	5,000,000	
Ֆինանսական օգնություն Հ Թումանյանի թանգարան	415,500	
Շինարարություն Լեռնահովիտի փողոցների և հարակից տարածքների բարեկարգում	1,063,900	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,163,485,085	
13. Կանոնադրական նպատակների իրականացման ուղղված ծախսերի չափը	1,136,512,507	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն

իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 29 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԷՆ - ԱՈՒԴԻՏ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



REPUBLIC OF ARMENIA

“ N – AUDIT “

LIMITED LIABILITY
COMPANY

375002, Երևան, Թումանյան-40/28

375002, Yerevan, st. Tumanyan-40/28

Հեռ. ☎(37410) 53-40-41, (37491) 40-80-41

e-mail: mail@n-audit.am

Ռեեստրում գրանցման համար

ՀԳԳՀ 1 20 0400

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Տաշիր Բարեգործական Հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը*

Կարծիք՝

Մենք աուդիտի ենք ենթարկել Տաշիր Բարեգործական Հիմնադրամի 2021թ-ի ընթացքում իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև 2021 թվականի ֆինանսական հաշվետվությունների (որոնց կազմում են 31.12.2021 թվականի դրությամբ ֆինանսական վիճակի մասին և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին) հաշվետվությունները

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ և կազմված են ՀՀ օրենսդրության և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմքեր՝

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք) և

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՄԽ կանոնագրքի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում:

Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք այն եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները կատարված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կարող է կորցնել իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ՝ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտաբերված էական թերությունների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Տնօրեն-որակավորված աուդիտոր՝

Վարդան Եփրոզյան



Որակաորված աուդիտոր՝

Նունե Ալեքսանյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ա Կ Տ Ի Վ	Ծանոթ.	31.12.2020թ.	31.12.2021
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	25.943	22.128
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ			
Ներդրումային գույք			
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ			
Հետաձգված հարկային ակտիվներ			
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	5	12.379.844	8.878.268
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		12.405.787	8.900.396
II. Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	78.497	27.771
Անավարտ արտադրություն			
Արտադրանք			
Ապրանքներ			
Տրված ընթացիկ կանխավճարներ	7	358.824	285.886
Դեբիտորական պարտքեր	7	38.677	2.795
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	8	9	4
Այլ դեբիտորական պարտքեր	7	1.903	1.392
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	5.957	1.211
Այլ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		483.867	319.058
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		12.889.654	9.219.455

Պ Ա Ս Ի Վ

III. Սեփական կապիտալ

Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ Կուտակված շահույթ	10	(511.087)	0
Ընդամենը սեփական կապիտալ		(511.087)	0

IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ

Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ Հետաձգված հարկային պարտավորություններ Ակտիվներին վերաբերվող շնորհներ	11	12.561.972	7.760.948
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		12.561.972	7.760.948

V. Ընթացիկ պարտավորություններ

Կարճաժամկետ բանկային վարկեր	11	10.000	-
Կարճաժամկետ փոխառություններ	11	694.149	9.000
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	12	134.248	73.057
Ստացված ընթացիկ կանխավճարներ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	13	358	606
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	12	14	40
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճ. հատուցումների գծով			254
Այլ կրեդիտորական պարտքեր			1.375.550
Եկամուտներին վերաբերող շնորհներ			
Այլ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		838.769	1.458.507
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		12.889.654	9.219.455

Ղեկավար

Ֆինանսական տնօրեն

Ա. Վարդյան

Լիանա Մանուկյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված հաշվետվության հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Ցուցանիշի անվանումը	2020թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից զուտ հասույթ	-	-
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	-	-
Համախառն շահույթ (վնաս)	-	-
Իրացման ծախսեր	-	-
Վարչական ծախսեր	(20.537)	(30.786)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	(20.537)	(30.786)
Գործառնական այլ եկամուտներ	7.299	69.985
Գործառնական այլ ծախսեր	(3.661.746)	(1.232.421)
Գործառնական շահույթ (վնաս)	(3.674.984)	(1.193.222)
Ֆինանսական ծախսեր	(4.808)	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	7.482.260	1.704.309
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	3.802.468	511.087
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը	3.802.468	511.087
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	-	-
Ընդամենը զուտ շահույթ (վնաս)	3.802.468	511.087
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք	3.802.468	511.087

Ղեկավար՝

Ֆինանսական տնօրեն՝



Ա. Վարդյան

Լիանա Մանուկյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված հաշվետվության հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

1. Նախորդ տարի /Ժամանակաշրջան/



Ցուցանիշի անվանումը	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ		Կուտակված շահույթ /վնաս/	Պահուստ ային կապիտալ	Ընդամենը
	Կանոնադրա կան կապիտալ	Զվճարված կապիտալ			
Մնացորդը առ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ			-4.313.555		-4.313.555
Հաշվետու տարվա (Ժամանակաշրջանի) գուտ շահույթ /վնաս/			3.802.468		3.802.468
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում)					
Մնացորդը առ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			-511.087		-511.087

2. Ընթացիկ տարի /Ժամանակաշրջան

Մնացորդը առ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			-511.087		-511.087
Հաշվետու տարվա (Ժամանակաշրջանի) գուտ շահույթ /վնաս/			511.087		511.087
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում)					
Մնացորդը առ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			0		0

Ղեկավար՝

Ֆինանսական տնօրեն՝


 Ա. Վարդյան

 Լիանա Մանուկյան



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված հաշվետվության հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Ցուցանիշի անվանումը	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	1.206	5.957
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	1.854	1.800
Գործառնական այլ գործունեությունից	871.818	254.348
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	873.672	256.148
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	423.684	150.567
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	72.337	367
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	13.947	15.242
Վճարումներ բյուջե	8.566	4.934
Սոց. Ապահովագրության հիմնադրամ	194	
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	2.774.612	916.141
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	3.293.339	1.067.075
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-2.419.667	-831.101
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	748.590	9.268.036
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր		
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	748.590	9.268.036
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	7.249.090	9.716.462
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	7.249.090	9.716.462
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-6.500.500	-448.426
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	5.422.099	12.383.586
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	5.422.099	12.383.586
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	6.916.416	11.092.964
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	5.600	
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	6.922.017	11.092.964
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	8.926.504	1.290.622
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	6.337	11.095
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ**	-1.585	-15.841
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	5.957	1.211

Ղեկավար՝

Ս. Վարդույան

Ս. Վարդույան

Ֆինանսական տնօրեն՝

Լիանա Մանուկյան

Լիանա Մանուկյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

Տաշիր Բարեգործական Հիմնադրամը հիմնադրվել է 2008 թվականի օգոստոսի 25-ին հիմնադիրների որոշմամբ, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամի կանոնադրության վերջին փոփոխությունը գրանցվել է 17.05.2018թ-ին, գրանցման թիվ՝ 222.160.01009:

Կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարն է 07203481:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Լոռու մարզ, Ք. Տաշիր, Ջահուկյան 10:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանությունը և ներկայացման հիմունքը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ կառավարության 11.03.2010թ. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» N 235-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ճշմարիտ ներկայացման հիմունքով: Ճշմարիտ ներկայացումը պահանջում է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ճիշտ ներկայացում՝ ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի համար ՖՀՄՄ-ներում տրված սահմանումների և ճանաչման չափանիշների համաձայն:

2.2 Չափման հիմքերը և հաշվեգրման հիմունքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամբողջիցացված արժեքով:

Ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական հոսքերի մասին հաշվետվության, կազմվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքին համապատասխան:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը դա այն հինական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ Կազմակերպությունը իրականացնում է գործունեություն: Կազմակերպության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի

Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար դրամներով՝ առաց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Կազմակերպությանը ունի հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որը կիրառվել է հետևողականորեն:

Սույն Ծանոթագրություններում ներկայացված են Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՖՀՄՍ 1-ի:

2.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

2.6 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Կազմակերպության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

2.7 Նոր և վերանայված ստանդարտների ընդունումը

Ընթացիկ տարում կազմակերպությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2015թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի /ՀՀՄՄԽ/ և ՀՀՄՄԽ-ի մեկնաբանման կոմիտեի /ՄԿ/ կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիր

3.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը

Կազմակերպությունը ունի հաստատված հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը, որը կիրառվել է հետևողականորեն:

3.2 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվությունների փաթեթում ներառված են.

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են առանձին դասակարգմամբ,

բ) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանի համար: Կազմակերպությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը,

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանի համար,

դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացված է ուղղակի մեթոդով: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, իսկ վճարված հարկերը՝ որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր,

զ) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցը, որպես ակտիվ ճանաչվելուց հետո, հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը.

h/h	Հիմնական միջոցը	Օգտակար ծառայության ժամկետը (տարի)
1.	Շենքեր, կառուցվածքներ	20
2.	Մեքենաներ և արքավորումներ	8
3.	Տրանսպորտային միջոցներ	5
4.	Արտադրական գույք	8
5.	այլ	1-8

Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով՝ վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Ակտիվների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և ակտիվի համար կիրառվող մաշվածության հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին օրվա դրությամբ, և եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից, ապա փոփոխությունները հաշվի են առնվում որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում: Այս փոփոխությունները կիրառվում են առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն

արտացոլելու նպատակով:

Հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է, երբ այն օտարվում է կամ ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է միմիայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն և ակտիվի արժեքը կարող է արժանահավաստորեն չափվել: Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են օգտակար ծառայության ընթացքում՝ գծային հիմունքով: Ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

3.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է դրանց ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է ԱՄԱԵ (առաջինը մուտք, առաջինը ելք) մեթոդով:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման հարկերը և տուրքերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների և նյութերի ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային գեղջերը, գների իջեցումները և նպանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները: Դրանք ներառում են նաև պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն

արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու (վերամշակելու) ընթացքում:

Պաշարների իրացման գուտ արժեքը դա սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

3.6 Ֆինանսական գործիքներ

3.6.1 Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ. դրանց ճանաչումն ու ապաճանաչումը

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչումը դա Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից նախկինում ճանաչված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության դուրսբերումն է: Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները: Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ: Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից:

Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և՛ որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասերը պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Կազմակերպության կողմից ֆինանսական գործիքները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, և ֆինանսական պարտավորություններ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա՝ հաշվի առնելով ձեռքբերման նպատակները:

Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

3.6.2 Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Կազմակերպությունը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները՝ և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային նպատակներով պահվող ակտիվներից կամ արտարժույթային գործառնություններից շահույթ կամ վնաս, կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող, երբ.

այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական

նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվելին ամորտիզացված գումարով, ինչպես փոխառությունները կամ հաճախորդներին տրվող կանխավճարները:

3.6.3 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Իրական արժեքը որոշվում է՝ հաշվետու ամսաթվի դրությամբ գեղջելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների գծով շուկայական տոկոսադրույք: Արդյունքում, ղեկավարության համոզմամբ, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

3.6.4 Փոխառություններ, առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է փոխառության իրական արժեքից, օրինակ երբ փոխառությունը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և փոխառության իրական արժեքների տարբերությունը փոխառության սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հիմնադիրներին տրված փոխառությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով: Փոխառության բոլոր ծախսումները ճանաչվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում դրանք կատարվել են:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Կազմակերպությունը չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները սկզբնապես սահմանված ժամկետներում: Պահուստի գումարը դա ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Արտարժույթով արտահայտված առևտրական դեբիտորական պարտքերը վերահաշվարկվում են դրամով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից առաջացող օգուտները կամ վնասները արտացոլվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)» տողում:

3.6.5 Առևտրական կրեդիտորական պարտքեր

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական պայմանների հիմունքով Կազմակերպության պարտականություններն են: Դրանց գծով տոկոսներ չեն հաշվառվում:

3.6.6 Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Կազմակերպության ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքները ժամկետային ավանդներն են: Ամորտիզացված արժեքը չափվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, երբ տեղին է, ավելի կարճ ժամանակաշրջանի համար, գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն զեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ հաշվեկշռային արժեքի հիման վրա: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքը ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով,

բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Կազմակերպությունը գնահատում է դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները և այն հայտնի պարտքային կորուստները, որոնք Կազմակերպությունը կրել է, սակայն այն չպետք է հաշվի առնի դեռևս չկրած ապագա պարտքային հնարավոր կորուստները:

3.6.7 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով գեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

3.7 Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավաստորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա:

Գործարքի արդյունքը կարելի է արժանահավաստորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները.

- ա) հնարավոր է արժանահավաստորեն չափել հասույթի գումարը,
- բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն,
- գ) հնարավոր է արժանահավաստորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- դ) հնարավոր է արժանահավաստորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պայմանագրի աշխատանքների ավարտվածության աստիճանը որոշվում է պայմանագրի աշխատանքների ուսումնասիրությամբ: Երբ պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավաստորեն գնահատվել, ապա Կազմակերպությունը ճանաչում է

հասույթը միայն պայմանագրի փաստացի կրած այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն, և ծախսումները որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները.

ա) Կազմակերպությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը

բ) Կազմակերպությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն (որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից), և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն,

ե) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կամ կատարվելիք ծախսումները:

3.8 Վարձակալություն

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում: Գործառնական վարձակալության տրված (ստացված) ակտիվները ճանաչվում են վարձատուի հաշվեկշռում:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե վարձակալին են փոխանցվում սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

Վարձակալության դասակարգումը կատարվում է վարձակալության սկզբի դրությամբ: Դասակարգումը որպես ֆինանսական, թե գործառնական, կախված է գործարքի էությունից, այլ ոչ թե պայմանագրի ձևից:

3.9 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Կազմակերպությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Կազմակերպությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

- կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդ)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և
- չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակություն)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Կազմակերպությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որն Կազմակերպությունը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.10 Ծնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ կազմակերպությունը կատարելու է դրան կցված պայմանները, եւ որ շնորհը ստացվելու է: Ծնորհի ստացումը ինքնին համոզիչ ապացույց չէ, որ շնորհին կցված պայմանները կատարվել կամ կատարվելու են:

Ծնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Հիմնականում այն ժամանակաշրջանները, որոնց ընթացքում Հիմնադրամը ճանաչում է պետական շնորհի հետ կապված ծախսերը կամ ծախսումները, հեշտությամբ որոշելի են: Այսպիսով, տրված շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն ժամանակաշրջանում, որում ճանաչվում են այդ համապատասխան ծախսերը: Նմանապես, մաշվող (ամորտիզացվող) ակտիվներին վերաբերող շնորհները սովորաբար ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանների ընթացքում եւ այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության ծախսերի ճանաչմանը:

Այն շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.11 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ճանաչվում է, երբ Կազմակերպությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Որպես պահուստ ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը (առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը), որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պայմանական պարտավորությունները և պայմանական ակտիվները չեն ճանաչվում:

Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել է:

3.12 Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Սփոթ փոխանակման փոխարժեքը անհապաղ փոխանակման համար մատչելի փոխանակման փոխարժեքն է:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում՝

- արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը,

- սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով,

- իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են իրական

արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման փոխարժեքից, ճանաչվում են Կազմակերպության շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ դրամային հոդվածի հետ կապված այն փոխարժեքային տարբերությունների, որոնք կազմում են արտերկրյա ստորաբաժանումում Կազմակերպության կատարած գուտ ներդրման մի մասը:

3.13 Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) հաշվետու ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Կազմակերպությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

3.14 Մխալներ

Կազմակերպությունն ուղղում է նախորդ ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց վերահաշվարկմամբ, բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը: Մխալներն ուղղվում են՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման ենթակա առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի

(Ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

3.15 Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ներքոշարադրյալի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ.

- փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ
- փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններից, այն դիտվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն:

3.16 Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Կազմակերպությունը պետք է փոխի իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը.

ա. պահանջվում է որևէ ՖՀՄՄ-ով, կամ

բ. հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Երբ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, ապա Կազմակերպությունը ճշգրտում է ամենավաղ ներկայացված նախորդող ժամանակաշրջանի սեփական կապիտալի համապատասխան հոդվածների սկզբնական այն մնացորդները, որոնց առնչվում են փոփոխությունները, ինչպես նաև յուրաքանչյուր ներկայացված նախորդող ժամանակաշրջանի համար բացահայտված այլ համադրելի գումարներն այնպես, կարծես թե հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը ի սկզբանե կիրառվել է:

Եթե Կազմակերպությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումն իրագործելի է: Հետընթաց կիրառումը նախորդող ժամանակաշրջանի համար իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը:

Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին:

Երբ Կազմակերպության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Կազմակերպությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Կազմակերպությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

3.17 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը տարբերակվում են երկու տեսակի.

- դեպքեր, որոնք տրամադրում են վկայություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանների վերաբերյալ (հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքեր)

- դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանից հետո առաջացած պայմանները (հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր):

Կազմակերպությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Կազմակերպությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

4. Հիմնական միջոցներ

Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ

000' դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական գույք	այլ	ընդամենը
Սկզբնական արժեք 31.12. 2020թ	30.516	-	-	30.516
Կուտակված մաշվածություն 31.12. 2020թ	4.573	-	-	4.573
Հաշվեկշռային արժեք 31.12. 2020թ	25.943	-	-	25.943
Ավելացում	-	-	-	-
Նվազեցում	-	-	-	-
Տարեկան մաշվածություն	3.815	-	-	3.815
Ընդամենը կուտակված մաշվածք	8.388	-	-	8.388
Հաշվեկշռային արժեք 31.12. 2021թ	22.128			22.128

Հիմնական միջոցների սեփականության իրավունքի սահմանափակումներ կամ այլ պայմանագրային պարտավորություններ չկան:

Գույքագրում

Ընկերությունը 2021թ.-ի թիվ 28/12/21-1 հրամանի համաձայն իրականացվել է հիմնական միջոցի գույքագրում՝ այն բաղկացած է մեկ միավոր գույքից KAMA3 65115-7865-37, որը ձեռք է բերվել 2019թ-ի ընթացքում:

5. Ոչ ընթացիկ ակտիվներ

Հազ. դրամ	Մնացորդ 31.12.2020	Մնացորդ 31.12.2021
Երկարաժամկետ փոխառություններ	12.379.884	7.760.948

6. Պաշարներ

Հազ. դրամ	Մնացորդ 31.12.2020	ավելացում	պակասեցում	Մնացորդ 31.12.2021
Ելույթեր	6.418	54.226	35.369	25.275
ապրանքներ	72.081	69.549	139.134	2.496

Պաշարների գույքագրումն իրականացվել է ընկերության տնօրենի 28.12.2021թ-ի թիվ 28/12/21-1 հրամանի համաձայն: Արդյունքում ավելցուկ կամ պակասորդ չի հայտնաբերվել:
Պաշարները գրավադրված չեն:

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	31.12.2020	31.12.2021
Վաճառքների գծով	38.677	2.795
Կանխավճարների գծով, այդ թվում՝	358.824	285.886
նյութեր ձեռք բերելու գծով	15.449	16.180
ապրանքներ ձեռք բերելու գծով	55.017	6.221
ծառայություններ ձեռք բերելու գծով	288.179	263.485
այլ դեբիտորներ	180	-
Աշխատավարձի գծով	1.903	1.392

8. Դեբիտորական պարտքեր բյուջեին

Հազար դրամ	31.12.2020	31.12.2021
Ընդամենը, այդ թվում՝	9	4
Միասնական հաշիվ	6	4
Դրոշմանհշային վճար	3	-

9.

10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ստորև ներկայացվում է Ընկերության դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ տեղեկատվություն՝ արտացոլված հազար դրամներով.

Մնացորդներ	31.12.2020	31.12.2021
Ընդամենը, այդ թվում՝	5.957	1.211
1. դրամարկղում դրամով	3.588	652
2. բանկում դրամով	2.369	559

11.

12. Կուտակված շահույթ

2020 թվականի գործունեության արդյունքներով Ընկերությունը ունեցել է գուտ շահույթ 3.802.468 հազ. Դրամ, իսկ 2021թ-ի գործունեության արդյունքներով շահույթը կազմում է 511.087 հազ. դրամ:

Ընկերության կուտակված վնասը 31.12.2020թ դրությամբ կազմում է 511.087 հազ. Դրամ, իսկ 31.12.2021թ դրությամբ 0 դրամ:

13. Վարկեր և փոխառություններ

Չազ. դրամ	Մնացորդ 31.12.2020	ավելացում	պակասեցում	Մնացորդ 31.12.2021
Երկարաժամկետ փոխառություն	12.561.972	23.648.333	28449.357	7.760.947

Տաշիր Բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններ 2021թ. դեկտեմբերի 31

Բանկային վարկ	10.000	-	10.000	-
Կարճաժամկետ փոխառություն	694.149	10.000	695.149	9.000

14. Կրեդիտորական պարտքեր

Չափ. դրամ	Մնացորդ 31.12.2020	Մնացորդ 31.12.2021
Ընդամենը, այդ թվում՝	134.248	73.057
Կրեդիտոր.պարտքեր գնումների գծով	88.812	45.668
Կրեդիտոր.պարտքեր ստացված ծառայութ., ընդունվ. աշխ. գծ.	16.681	1.091
Կրեդիտոր.պարտքեր ՀՄ-ների գծով	28.755	26.297

Այլ կրեդիտորներ	-	254
-----------------	---	-----

15. Կրեդիտորական պարտքեր բյուջեին

Չափար դրամ	31.12.2020	31.12.2021
Ընդամենը, այդ թվում՝	358	1.189
Եկամտային հարկ	298	516
ԱԱՀ	-	509
դրոշմանիշային վճար սոցվճար	4	34
գույքահարկ	14	40
	60	90

14. Եկամուտներ

Հիմնադրամի եկամուտները 2021թ ընթացքում իրենից ներկայացնում է

- Գործառնական այլ եկամուտ 69.985
- շնորհներից և այլ անհատույց եկամուտներից 1.629.673
- արտարժույթի փոխարժեքային տարբեր 1.167.045
- տոկոսներից 32

15. Ծախսեր

2021 թվականի ընթացքում Հիմնադրամի ծախսերը հետևյալն են

- վարչական ծախսեր 30.786
- այդ թվում՝
 - ✓ աշխատավարձ 20.454
 - ✓ ՀՄ մաշվածք 3.815
 - ✓ գրասենյակային 450

Տաշիր Բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններ 2021թ. դեկտեմբերի 31

Բանկային վարկ	10.000	-	10.000	-
Կարճաժամկետ փոխառություն	694.149	10.000	695.149	9.000

14. Կրեդիտորական պարտքեր

Չազ. դրամ	Մնացորդ 31.12.2020	Մնացորդ 31.12.2021
Ընդամենը, այդ թվում՝	134.248	73.057
Կրեդիտոր.պարտքեր գնումների գծով	88.812	45.668
Կրեդիտոր.պարտքեր ստացված ծառայութ., ընդունվ. աշխ. գծ.	16.681	1.091
Կրեդիտոր.պարտքեր ՀՄ-ների գծով	28.755	26.297

Այլ կրեդիտորներ	-	254
-----------------	---	-----

15. Կրեդիտորական պարտքեր բյուջեին

Չազար դրամ	31.12.2020	31.12.2021
Ընդամենը, այդ թվում՝	358	1.189
Եկամտային հարկ	298	516
ԱԱՀ	-	509
դրոշմանիշային վճար	4	34
սոցվճար	14	40
գույքահարկ	60	90

14. Եկամուտներ

Հիմնադրամի եկամուտները 2021թ ընթացքում իրենից ներկայացնում է

- Գործառնական այլ եկամուտ 69.985
- շնորհներից և այլ անհատույց եկամուտներից 1.629.673
- արտարժույթի փոխարժեքային տարբեր 1.167.045
- տոկոսներից 32

15. Ծախսեր

2021 թվականի ընթացքում Հիմնադրամի ծախսերը հետևյալն են

- վարչական ծախսեր 30.786
- այդ թվում՝
 - ✓ աշխատավարձ 20.454
 - ✓ ՀՄ մաշվածք 3.815
 - ✓ գրասենյակային 450

✓ աուդիտորական, խորհրդատվական	2000
✓ բանկային ծառայությունից	783
✓ այլ	3.284
- գործառնական և այլ ծախսեր	1.232.421
այդ թվում՝	
✓ տույժ, տուգանք	1
✓ օգնություններ	1.136.513
✓ գործառնական այլ	95.907
- արտարժույթի փոխարժեքային տարբեր	1.092.441

16. Պայմանականություններ

16.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Կազմակերպության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Կազմակերպության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, դեկլարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Հետևաբար, Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

16.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և

ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Բացի տրանսպորտային միջոցների համար սահմանված ԱՊՊԱ-ից Կազմակերպությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Կազմակերպության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական դրության վրա:

16.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Կազմակերպության ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

16.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ գործում է Հիմնադրամը, չի պահանջում, որպեսզի ներկայացվի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության հետ կապված տարեկան հաշվետվություն կամ որևէ այլ զեկույց:

Ղեկավարության համոզմամբ՝ Կազմակերպությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված ՀՀ օրենսդրության պահանջները և վստահ է, որ Կազմակերպությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

Ղեկավար՝

Ա. Վարդյան

Ֆինանսական տնօրեն՝

Լիանա Մանուկյան

